



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 636-Ա

«ՎԱՆԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերության պահանջների՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Մինչև ա/թ դեկտեմբերի 31-ը «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բոլոր ծառայությունները տեղակայել Գարեգին Նժդեհի փողոցի N 2/42 հասցեում 2013-2018 թվականների ընթացքում կառուցված հիմնական՝ 12946.09 քառ. մետր և ծննդատան՝ 3395.12 քառ. մետր մակերեսով տարածքով մասնաշենքերում: «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացնել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Վանաձոր քաղաքի Նիզամի փողոցի N 53/1 հասցեում տեղակայված հիվանդանոցի՝ 3347,26 քառ. մետր մակերեսով տարածքով շինությունը՝ 0,32094 հեկտար հողատարածքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 12062012-06-0061), Վանաձոր քաղաքի Նիզամի փողոցի N 53/4 հասցեում տեղակայված հիվանդանոցի՝ 220,08 քառ. մետր և 253,74 քառ. մետր մակերեսով տարածքով շինությունները՝ 0,08765 հեկտար հողատարածքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 12062012-06-0063) և Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի N 8 հասցեում տեղակայված բոլոր շինությունները, բացառությամբ 2229.11 քառ. մետր մակերեսով տարածքով «Նարեկ» մասնաշենքից, 259.92 քառ. մետր մակերեսով տարածքով դիախերձարանից, 180.2 քառ. մետր մակերեսով տարածքով ախտաբանական մասնաշենքից և վերջիններիս հետնամասում տեղակայված՝ 381.15 քառ. մետր և 132.0 քառ. մետր մակերեսով տարածքով ավտոտնակներից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 14122018-06-0020):

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ազատվող տարածքների հաշվեկշռային արժեքների չափով, բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով, նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալի չափը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ